ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/04

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Տ. Լաճիկյանի,
«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Պետրոսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցում, անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 25.01.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Կասեցնել «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» գնման ընթացակարգը և պատվիրատուին արգելել կատարել որոշակի գործողություններ, պարտավորեցնել նաև ընդունել համապատասխան որոշումներ:

2. Քննության առնել գնումների գործընթացում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների վերաբերյալ բողոքում ներկայացված փաստերը և բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 25.01.2021թ.-ին:

26.01.2021թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/04 համարի ծածկագիրը:

03.02.2021թ.-ին, 12.02.2021թ.-ին, և 19.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 12.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.02.2021թ.-ին:

2. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 25.01.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«25.12.2020թ.-ին ՀՀ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից Անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռք բերման նպատակով www.armeps.am համակարգով, հայտարարվել է ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցում, որին մասնակցել են թվով 9 ընկերություններ:

14.01.2021թ.-ին ՀՀ Գնումների մասին Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա հրավիրվել է բանակցություններ: Մրցույթով հրավիրված բանակցություններում «Պահապան 1» ՍՊԸ-ի կողմից առաջարկվում է 3.350.000 ՀՀ դրամ և հաջորդ տեղ զբաղեցնող «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի կողմից 3.360.000 ՀՀ դրամ չհիմնավորված գներ:

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից «ՍՀԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված 14.01.2021թ.-ին ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա մրցույթով հրավիրված, բանակցություններում մասնակից կազմակերպություններին բանակցային փուլից դուրս մղելու նպատակով «Պահապան 1» ՍՊԸ-ի և «Քինգ Մարշալ» ՍՊԸ կողմից առաջարկում են նախահաշվային գնից 6,000.000 ՀՀ դրամ, չհիմնավորված ցածր գներ, մասնավորապես «Պահապան 1» ՍՊԸ-3,350.000 ՀՀ դրամ և հաջորդ տեղ զբաղեցրած «Քինգ Մարշալ» ՍՊԸ-3,360.000 ՀՀ դրամ /Հիմք՝ Հանձնաժողովի թվականի թիվ 3 արձանագրությունը և պայմանագիր կնքելու մասին որոշումը/:

Մրցույթի տեխնիկական բնութագրում հստակ սահմանված է՝ հանձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 12 ամիս, հետևյալ պահանջով՝

Պահնորդական ծառայությունն իրականացվելու է շուրջօրյա առանց հանգստյան և տոնական օրերի, ընդ որում՝

- *մեկ պահակակետ-շաբաթակաո յոթ օր, քսանչորսժամյա պահնորդական ծառայություն՝ առնվազն մեկ պահնորդի միջոցով,*
- *մեկ պահակակետ-միայն աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00, առնվազն մեկ պահնորդի միջոցով:*

Այսինքն պահնորդների միջոցով իրականացվող ծառայություններում անձնակազմի նվազագույն աշխատավարձի հաշվարկով՝ 90000 կամ 92700 ՀՀ դրամը, պետք է պահպանվի՝

- *մեկ պահակակետ-շաբաթական յոթ օր, քսանչորսժամյա պահնորդական ծառայություն նվազագույնը 3 պահնորդով կազմում է 90000 x 3 = 270000 ՀՀ դրամ ամսական,*
- *մեկ պահակակետ-միայն աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00, առնվազն մեկ պահնորդի միջոցով կազմում է ոչ պակաս 100000 x 1 = 100000 ՀՀ դրամ ամսական,*
- *270000 + 100000 = 370.000 ՀՀ դրամ ամսական, իսկ 12 ամսվա կտրվածքով կազմում է 12 x 370.000 =, 4,440.000 ՀՀ դրամ.*

Հաշվարկը ապացուցում է, որ տվյալ կազմակերպությունների կողմից առաջարկված գներով նույնիսկ չեն կարողանալու ապահովել ՀՀ Օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձը, ինչպես նաև աշխատակցի հասանելիք վերջնահաշվարկը կամ արձակուրդային վճարը, ըստ որի նման վարքագիծը ենթադրում է, որ այդ կազմակերպությունները հարկերը թաքցնելու նպատակով չեն գրանցելու աշխատակիցներին:

Արդյունքում պահնորդական ծառայությունների ձեռք բերման մրցույթներում նշված կազմակերպությունների կողմից մրցակիցներին դուրս մղելու նպատակով, դեմպինգ իրականացնելով խաթարում են բնականոն մրցակցությանը, ինչը նաև միտում է ոլորտում մենաշնորհ ձեռք բերելուն:

Գնումների մասին ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանված է՝ Պայմանագրի գնի հաշվարկը:

Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ուստի և Անվտանգության և պահնորդական ծառայության աշխատակիցը պետք է իրականացվեն համաձայն Տեխնիկական բնութագրի պահանջի և պայմանագրի գնի հաշվարկի մեջ պետք է ներառված լինեն բոլոր ծախսերը ինչպես նաև ակնկալվող շահույթը, այն է՝

- *Պահնորդական ծառայությունն անհրաժեշտ միջոցների ներգրավմամբ մարդկային անձնակազմի կողմից իրականացվող գործունեություն է, որը պետք է ունակ լինի՝*
- *անընդհատ պարեկության միջոցով ողջամտորեն կանխարգելելու, կանխելու, կասեցնելու և խափանելու պահպանվող տարածքում իրավախախտումները,*
- *ողջամտորեն ապահովելու պահպանվող տարածքում գտնվող անձանց պատշաճ վարքագիծը:*

Պահնորդական ծառայությունը մատուցվում է պահնորդների միջոցով, ովքեր պետք է՝

- *իրականացնեն պատշաճ պահնորդական ծառայություն /ներառյալ տեսահսկման և հակահրդեհային ահազանգման համակարգերի միջոցով/,*
- *իրականացնեն հասարակական կարգի պահպանում,*

- *կանխեն խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը,*
- *արագ և համարժեք արձագանքեն արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն),*
- *կազմեն պահնորդական զեկուցագրեր ներառելով միջադեպերի, իրավախախտումների, պատահարների դեպքերը և այլ վերաբերելի փաստեր,*
- *անվտանգության խախտման կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքում անմիջապես ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ և այդ մասին անհապաղ տեղեկացնեն պահպանվող օբյեկտի ղեկավարին,*
- *արգելեն կողմնակի անձանց մուտքը,*
- *փակ բակ թույլատրեն մուտք գործելու միայն աշխատակիցների ավտոմեքենաներին,*
- *ամենօրյա շրջայց կատարեն շենքի ներսում՝ աշխատանքի ավարտից հետո,*
- *կատարեն պահպանվող տարածքի անվտանգության ապահովման հետ կապված՝ պահպանվող օբյեկտի ղեկավարի հանձնարարությունները,*
- *արտակարգ իրավիճակի դեպքում օժանդակեն պահպանվող օբյեկտի ղեկավարին՝ վտանգը չեզոքացնելու կամ դրա հետևանքները վերացնելու կամ նվազեցնելու հարցում,*
- *իրականացնեն պահպանվող տարածքի դռների, անցակետի, մուտքը վերահսկման, սարքավորումների, բանալիների ապահով հսկողություն դրանք հանձնելով միայն լիազորված անձանց:*

Պահպանության կառուցվածքը՝

Պահնորդական ծառայությունն իրականացվելու է շուրջօրյա առանց հանգստյան և տոնական օրերի, ընդ որում՝

- *մեկ պահակակետ-շաբաթական յոթ օր, քսանչորսժամյա պահնորդական ծառայություն առնվազն մեկ պահնորդի միջոցով,*
- *մեկ պահակակետ-միայն աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00, առնվազն մեկ պահնորդի միջոցով:*

Պահնորդները պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում:

Պահպանման ենթակա տարածք է հանդիսանում «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տասներկու հարկանի վարչական շենքը՝

5780,7 մ2 մակերեսով, նկուղը 719,4 ք.մ և հարակից տարածքը (շվաքարանը) 281,4 մ2 մակերեսով, որը գտնվում է ք. Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում:

Վերոնշյալ բոլոր պայմանները պարտադիր են և պետք է իրականացվեն պահնորդական ծառայությունը մատուցողի կողմից:

Պահնորդական ծառայություն մատուցողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կկրի այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով կհասցվի Պատվիրատուին:

Պահնորդական ծառայություններ մատուցելիս պահնորդները պետք է կրեն եղանակային պայմաններին համապատասխան ամառային և ձմեռային միասնական համազգեստ:

Պահնորդները պարտավոր են իրենց պարտավորությունների կատարման ընթացքում կատարել Պատվիրատուի կողմից տրված «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքին չհակասող համապատասխան հանձնարարությունները:

Կատարողը պարտավոր է՝

- *պահնորդների անհատական կազմը համաձայնեցնել Պատվիրատուի հետ,*
- *պահնորդին այլ պահնորդով մշտապես կամ ժամանակավորապես փոխարինելիս ոչ ուշ քան 24 ժամ առաջ համաձայնեցնել Պատվիրատուի հետ,*
- *Պատվիրատուի պահպանության ենթակա տարածքում պահնորդի համար սահմանել մեկամսյա ժամկետով փորձաշրջան, որպեսզի Պատվիրատուն պարզի կոնկրետ Պահնորդը համապատասխանում է իր աշխատանքային կարողություններին և մասնագիտական որակներին թե ոչ և չհամապատասխանելու պարագայում Պատվիրատուի պահանջով փոխարինել այլ Պահնորդով:*
- *Պայմանագրի կատարման ընթացքում պահնորդի կողմից պահնորդական ծառայությունների ոչ պատշաճ կատարման կամ չկատարման դեպքում Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով 1 աշխատանքային օրվա ընթացքում փոխարինել ծառայաթյուն իրականացնող պահնորդին այլ պահնորդով:*
- *Ծառայություն մատուցող ընտրված մասնակիցը պետք է ունենա պահնորդսկան գործունեության լիցենզիա*
- *Մինչև հայտերի բացման օրը մասնակից կազմակերպությունները կարող են ծանոթանալ պահպանման ենթակա տարածքին (ք. Երևան, Կոմիտաս 49/4):*

Այս նույն պահանջները՝ Պահնորդական ծառայությունները, կարգավորվում են «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքով և օրենքի 5-րդ հոդվածով սահմանված է՝ Թիկնապահական և պահնորդական գործունեության սկզբունքները

Թիկնապահական և պահնորդական գործունեությունն իրականացվում է օրինականության, օրենքի առջև բոլորի հավասարության, մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու արժանապատվությունը, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները և օրինական շահերը հարգելու, պաշտպանվող ֆիզիկական անձի ու պահպանվող օբյեկտի պաշտպանությունը հուսալի և անվտանգ եղանակով իրականացնելու սկզբունքների հիման վրա:

Նույն օրենքի 12-րդ հողվածով սահմանված է՝ Թիկնապահի և պահնորդի իրավական կարգավիճակը՝

1. Թիկնապահը և պահնորդն աշխատում են աշխատանքային պայմանագրի հիման վրա, և նրանց վրա տարածվում են աշխատանքային օրենսդրության պահանջները:

2. Թիկնապահի և պահնորդի աշխատանքին հավակնող անձը աշխատանքային պայմանագիր կնքելիս աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի հետ մեկտեղ պարտավոր է ներկայացնել իր կողմից հատուկ պատրաստություն (որակավորում) անցնելը հավաստող փաստաթուղթ:

3. Թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռքբերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթներ իրականացնելու (այդ թվում՝ զենքի օգտագործմաը և հատուկ միջոցների գործադրմամբ) իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն թիկնապահի կամ պահնորդի որակավորում:

4. Թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթ իրականացնելու իրավունք չունեն այն անձինք, ովքեր՝

- դատական կարգով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

- հոգեկան հիվանդության, հարբեցողության կամ թմրամոլության պատճառով հաշվառման են կանգնած բուժհիմնարկներում.

- դատապարտվել են դիտավորյալ հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ.

- խուսափել են ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

Նույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված է՝ Պահնորդի (թիկնապահի) համազգեստը, վկայականը, զենքը, հատուկ և տեխնիկական միջոցները

1. Պահնորդական կազմակերպությունը պարտավոր է պահնորդին (թիկնապահին) տրամադրել հատուկ համազգեստ, անձը հաստատող վկայական, զենք, հատուկ և տեխնիկական միջոցներ:

2. Հատուկ համազգեստը տեսանելի կերպով պարունակելու և/կամ նրան փակցվելու է պահնորդի (թիկնապահի) անունը, ազգանունը և պահնորդական կազմակերպության ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը:

3. Պահնորդն իրավունք չունի համազգեստ կրելու՝ չլինելով պարտականությունների կատարման մեջ, բացառությամբ մասնավոր պահնորդական կազմակերպության շենքում կամ դրա հարակից տարածքում գտնվելու դեպքերի: Իր պարտականությունները կատարելիս պահնորդը պարտավոր է կրել համազգեստ: Այս պարտականությունից ազատվում են միայն թիկնապահները սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ծառայության մատուցումն ապահովող պարտականությունները կատարելիս:

4. Իրենց պարտականությունները կատարելիս պահնորդները (թիկնապահները) կարող են օգտագործել միայն պահնորդական կազմակերպության սեփականությունը համարվող կամ օրինական տիրապետման տակ գտնվող զենքը, հատուկ և տեխնիկական միջոցները: Տրանսպորտային միջոցի վրա տեսանելի կերպով պետք է պատկերված լինեն կազմակերպության անվանումը, ապրանքային նշանը, կազմակերպության հեռախոսահամարները:

Կատարողը, անվտանգության և պահնորդային ծառայությունների պայմանագրի շրջանակներում պարտավոր է պահնորդին տրամադրել հատուկ համազգեստ, անձը հաստատող վկայական նշված պահնորդի անունը, տեխնիկական միջոցները և համազգեստը, ինչի վրա տեսանելի կերպով պետք է պարունակի պահնորդական կազմակերպության ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, որոնք համարվում են անհրաժեշտ ծախսեր: Այսինքն յուրաքանչյուր պահնորդին, կատարողը պարտավոր է տրամադրել հատուկ համազգեստ տարբեր եղանակների համար՝ գարուն/աշուն, ամառ, ձմեռ, կազմակերպության ապրանքային նշանը՝ շեվրո, լինելով փակցված, որի շուկայական գինը մեկ պահնորդի համար կազմում է 350000-40000 ՀՀ դրամ, չհաշված պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովման համար գրացամատյանները, գրենական պիտույքները և կապի միջոցների այլ ծախսերը:

Ուստի նման պահանջները պարտադիր են Պատվիրատուի տարածքներում Անվտանգության և պահնորդային ծառայությունների մատուցման ժամանակ:

Վերը նշված փաստերի և կատարվածից ելնելով Պատվիրատուին 22.01.2021թ.ի գրությամբ ներկայացվել է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների փաստերը, որ՝

«Տվյալ կազմակերպությունների կողմից համաձայնեցված քայլերը բանակցություններում, դիտավորություն և միտում էր, մասնակցող կազմակերպությունների մրցակցությունը սահմանափակելու կամ առկա է տվյալ կազմակերպության միջև հակամրցակցային համաձայնություն, որոնց գործողությունները համարվում են Գնումների մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտումներ՝ Գնումների գործընթացում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների, այդ թվում՝ հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտման նպատակով իրավասու մարմինը համագործակցում է լիազոր մարմնի և պատվիրատուների հետ:

Ուստի հաղթող ճանաչված «Պահապան 1» ՍՊ և հաջորդաբար տեղ զբաղեցնող «Քինգ Մարշալ» ՍՊ ընկերությունների առաջարկված չհիմնավորված ցածր գներով պայմանագիր կնքելը անձնակազմի քանակ ունենալն, անհնարին է, հետևաբար անհրաժեշտ է չկնքել պայմանագիրը և ընկերությունների կողմից դիտավորությամբ կատարված խախտումների ու ապօրինի գործողությունների փաստերը ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարություն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»

Սակայն սահմանված ժամկետում չի պատասխանել գրությանը և տվյալ ընկերություններին գնումների գործընթացին մուսնուսկցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար ոչ մի միջոց չի ձեռնարկել:

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1. գնման գործընթացի միասնական կանոններով միցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2. պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3. ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի Գնման առարկայի բնութագրերը՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1. պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2. չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3. պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4. ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և ՀՀ գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ

օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի Պայմանագրի գնի հաշվարկը՝

1. Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահարկը:

2. Պայմանագրի գինը՝

1. կարող է լինել գործոնային, երբ պայմանագրի գինը փոփոխվում է պայմանագրով նախատեսված պայմանների (գործոնների) փոփոխության ազդեցությամբ: Հակառակ դեպքում պայմանագրի գինը կայուն է, և կողմերը պարտավոր են պայմանագրային պարտավորությունները ողջ ծավալով կատարել պայմանագրի գնի շրջանակում.

2. պետական գաղտնիք պարունակող՝ ռազմական կարիքների բավարարման նպատակով արտադրանքի նոր տեսակների հեռանկարային մշակման, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ձեռքբերման դեպքում կարող է լինել փաստացի ծախսերով հաշվարկված, պայմանով, որ այն չպետք է գերազանցի տվյալ ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը ձեռք բերելու համար նախատեսված ֆինանսական հատկացման չափը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի Գնումների ընթացակարգի կասեցումը՝

1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հողվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը:

2. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է

շարունակել գնման գործընթացը: Սույն մասով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնման առարկայի հատկանիշները բավարար ճշտությամբ սահմանված չեն որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, հնարավորություն չի տալիս մասնակիցներին և պատվիրատուներին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան: Ուստի նաև նման խախտմամբ կնքվելիք պայմանագրից զերծ մնալը Մասնակցին տրված իրավունքն է:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Կասեցնել «ՍՀԱՄ-ԳՀԾՁԲ-21/1 գնման ընթացակարգը և պատվիրատուին արգելել կատարել որոշակի գործողություններ, պարտավորեցնել նաև ընդունել համապատասխան որոշումներ:

2. Քննության առնել գնումների գործընթացում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների վերաբերյալ բողոքում ներկայացված փաստերը և բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու «ՍՀԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» գնման ընթացակարգը:

Ընկերությունը 03.02.2021թ.-ին ներկայացրած լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ է ներկայացվում «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Դիրքորոշման վերաբերյալ պատասխանը, այն է՝

Պատվիրատուին հայտնի է եղել մրցույթի մասնակից «Պահապան 1» ՍՊ և «Քինգ Մարշալ» ՍՊ ընկերությունների կողմից կամ նրանց ղեկավար մարմինների կամ ներկայացուցիչների կողմից գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական արարքները, սակայն դրա ի հայտ գալու օրը, չեն պահանջել Գնումների մասին ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով Պայմանագրի գնի հաշվարկը, սահմանված տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարների (ծախսերի), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերի, պարգևավճարների, վերջնահաշվարկների և ակնկալվող շահույթի հաշվարկը, ինչպես նաև չեն պահանջել

պայմանագրի գնի սահմաններում տեխնիկական բնութագրով պահանջված նորմերը կամ դրույթները պահպանելու հնարավորությունը, այսինքն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինեին այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տվյալ ընկերությունների կողմից դեմպինգ իրականացնելով, խաթարելով բնականոն մրցակցությանը, սահմանափակելու գործողությունների միջոցով չհիմնավորված ապօրինի մենաշնորհային իջեցված գին առաջարկելու փաստերի հիման վրա որն ուղղված է այլ տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն, տնտեսավարող այլ սուբյեկտներին շուկայից դուրս մղելուն, խտրական գներ սահմանելուն կամ պահպանելուն, Պատվիրատուն Գնումների մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջով, կատարվածի վերաբերյալ գրավոր չի տեղեկացրել իրավապահ մարմիններին:

Կատարվածից ելնելով Պատվիրատուին 22.01.2021թ.ի գրությամբ ներկայացվել է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների Փաստերը, որ՝

«Տվյալ կազմակերպությեեերի կողմից համաձայնեցված քայլերը բանակցություններում, դիտավորություն և միտում էր, մասնակցող կազմակերպությունների մրցակցությունը սահմանափակելու կամ առկա է տվյալ կազմակերպության միջև հակամրցակցային համաձայնություն, որոնց գործողությունները համարվում են Գնումների մասին ՀՀ օրենքի 38-րդ հողվածի 2-րդ մասի պահանջների խախտումներ՝ 2. Գնումների գործընթացում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների, այդ թվում՝ հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտման նպատակով իրավասու մարմինը համագործակցում է լիազոր մարմնի և պատվիրատուների հետ:

Ուստի հաղթող ճանաչված «Պահապան 1» ՍՊ և հաջորդաբար տեղ զբաղեցնող «Քինգ Մարշալ» ՍՊ ընկերությունների առաջարկված չհիմնավորված ցածր գներով պայմանագիր կնքելը անձնակազմի բանակ ունենալն, անհնարին է, հետևաբար անհրաժեշտ է չկնքել պայմանագիրը և ընկերությունների կողմից դիտավորությամբ կատարված խախտումների ու ապօրինի գործողությունների փաստերը նեյուկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարություն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»

Սակայն Պատվիրաաուները Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության, ինչպես նաև ՀՀ Օրենսդրության խախտումների համար միջոցներ չեն

ձեռնարկել և պահանջել անբարեխիղճ մրցակցության, մրցակցությունը սահմանափակելու գործողությունների միջոցով գնման գործընթացներում չհիմնավորված ապօրինի մենաշնորհային իջեցված, ցածր գին առաջարկելու համար՝ տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարների (ծախսերի), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, վերջնահաշվարկների և ակնկալվող շահույթի հաշվարկը՝ չեն մերժել հայտը, ուստի և տվյալ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու կամ հակաօրինական արարքի՝ դրա ի հայտ գալու օրը, համար իրավապահ մարմիններին այդ մասին գրավոր տեղեկացնելու ոչ մի միջոց չեն ձեռնարկել:

Հիմք՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի Մասնակիցների հակաօրինական գործողությունների հետևանքները.

1. Եթե հայտնաբերվում է մասնակցի կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցչի գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական արարք, ապա դրա ի հայտ գալու օրը պատվիրատուն այդ մասին գրավոր տեղեկացնում է իրավապահ մարմիններին:

2. Գնումների մասին ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի Գնման առարկայի բնութագրերը՝
2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

3. Գնումների մասին ՀՀ Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տարրերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

4. Գնումների մասին ՀՀ Օրենքի 38-րդ հոդվածի՝ Մասնակիցների հետ բանակցություններ վարելու անթույլատրելիությունը, տնտեսական մրցակցության սահմանափակման դեպքերը բացահայտելը և կանխարգելելը՝ Գնումների գործընթացում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների, այդ թվում՝

հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտման նպատակով իրավասու մարմինը համագործակցում է լիազոր մարմնի և պատվիրատուների հետ:

5. Գնումների մասին ՀՀ Օրենքի 39-րդ հոդվածի Պայմանագրի գնի հաշվարկը՝

1.Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Գնումների մասին ՀՀ Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով հստակ սահմանված է հրավերի բովանդակությունը՝ նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացաւ հայտով.

Հայաստանի հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Գնումների գործընթացի կազմակերպման կարգը, 40-րդ կետի զ) ենթակետով սահմանվել է, որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից....,

Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշումը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ է, ուստի այն չի կարող հակասել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին, տվյալ դեպքում Գնումների մասին ՀՀ Օրենքին, ուստի և Պատվիրատուն պարտավոր էր ղեկավարվել բացառապես ՀՀ Օրենսդրության, Գնումների մասին ՀՀ Օրենքով և կիրառել այն:»:

Ընկերությունը 19.02.2021թ.-ին ներկայացրած լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի /այսուհետ Պատվիրատու/ կարիքների համար անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռք բերման ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերի ՄԱՍ Ի-ի 5-րդ բաժնի՝ ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ, 5.1 կետով հստակ սահմանված է՝

5.1 Առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, փուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով: Հետևաբար Պատվիրատուն պետք է առաջնորդվեր հրավերով սահմանված պահանջներով:

Ուստի՝ արդյոք Պատվիրատուի մոտ կասկած չի առաջացել, որ ինքնարժեքից պակաս գին առաջարկելով <<Պահապան 1>> ՍՊԸ-ն և <<Քինգ Մարշալ>> ՍՊԸ-ն իրականացրել են մրցակցության իմիտացիա, դուրս մղելով մրցակցությունից մրցակից կազմակերպություններին, արդյունքում ներկայացնելով ինքնարժեքից պակաս գին:

Արդյոք հախթող ճանաչված <<Պահապան 1>> ՍՊԸ-ի հաջորդ տեղ զբաղեցրած <<Քինգ Մարշալ>> ՍՊԸ-ի, հայտերը համապատասխանում է հրավերի 5-րդ բաժնի 5.1 կետի պահանջներին:

Հետևաբար Պատվիրատուն չի գնահատել հրավերով սահմանված կարգով «Պահապան 1» ՍՊԸ-ի հայտը, չի պահանջել հրավերի ՄԱՍ Ի-ի 5-րդ մասի 5.1 կետի պահանջներին համապատասխան հայտով հաստատված, գնային առաջարկի հիմնավորումները, արդյունքում ճանաչել է հախթող, խախտելով իրենց իսկ կողմից ՍՀԱՄ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերի պահանջները:

«Պահապան 1» ՍՊԸ-ի գնային առաջարկը պակաս է ինքնարժեքից, որն ուղղված է այլ տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն, տնտեսավարող այլ սուբյեկտներին շուկայից դուրս մղելուն, խտրական գներ սահմանելուն կամ պահպանելուն: Ելնելով վերոգրյալից գտնում եմ, որ «Պահապան 1» ՍՊԸ-ի հետ չպետք է կնքվեր պայմանագիր և կատարվածի վերաբերյալ տվյալ կազմակերպության ղեկավար մարմնի կամ ներկայացուցչի կողմից գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական արարք կատարելու համար՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջով, Պատվիրատուն գրավոր պետք է տեղեկացներ իրավապահ մարմիններին:»:

3. <u>«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 26.01.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/919-2021 գրությամբ դիմել է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 25.01.2021թ.-ին

ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին, 12.01.2021թ.-ին գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Անդրադառնալով ներկայացված բողոքի «Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները» բաժնում ներկայացված այն պնդումներին, որ ընթացակարգի մասնակիցներից երկուսը կայացրել են հակամրցակցային համաձայնություն ու վերջիններիս կողմից ներկայացված գնային առաջարկի պայմաններում այդ ընկերությունների կողմից ծառայության մատուցումը անհնարին է, իսկ դրանք հիմք կարող էին հանդիսանալ վերը նշված ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, սակայն մեր ընկերությունը համապատասխան քայլեր չի ձեռնարկել գտնում եմ, որ հիմնազուրկ են: «Տրանս-Սֆեր» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հաշվարկին մեր ընկերությունը չէր կարող անդրադառնալ, քանի որ ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետ սահմանում է՝

«2) մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:»:

Վերոնշյալ իրավանորմից հետևում է, որ պատվիրատուն չի կարող մասնակցից պահանջել արժեքի հաշվարկների բացվածք և առավել ևս մերժել վերջինիսկ կողմից ներկայացված հայտը ցածր արժեքի պատճառով:

Հարկերից խուսափելու վերաբերյալ պնդմանը ևս պատվիրատուն չէր կարող անդրադառնալ, այդ հարցը գտնվում է պատկան մարմինների իրավասության ներքո: Ինչպես իրավացիորեն մեջբերված է «Տրանս-Սֆեր» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բողոքում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների, այդ թվում՝ հակամրցակցային համաձայնությունների և չարաշահումների բացահայտման նպատակով իրավասու մարմինը համագործաքցում է

լիազոր մարմնի և պատվիրատուների հետ: Հետևաբար, եթե բողոքաբերը ենթադրում է, որ առկա է հակամրցակցային համաձայնություն, ապա նա պետք է դրա բացահատման համար դիմի իրավասու մարմնին: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի կարող քննարկել այդ հարցը:

Բողոքաբերի այն պնդումը, որ Պատվիրատուն պետք է դիմեր ՀՀ ֆինանսների նախարարություն «Պահապան 1» ՍՊ և «Քինգ Մարշալ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար ևս հիմնազուրկ է, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետը սպառիչ սահմանում է այն դեպքերը, երբ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Տվյալ ընթացակարգի շրջանակներում վերը նշված ընկերությունները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետում նշված խախտումներից և ոչ մեկը թույլ չեն տվել:

Անդրադառնալով ներկայացված բողոքի «Բողոքի փաստական և իրավական հիմնավորումները» բաժնում ներկայացված դիտարկումներին, պետք է նշեմ, որ դրանում որևէ փաստական հիմք չկա նշված, իսկ մեջբերված իրավանորմերը չեն հիմնավորում ներկայացված պահանջը, քանի որ դրանցով սահմանված որևէ նորմի խախտում ընթացակարգի շրջակներում չի թույլ տրվել:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ «Տրանս-Սֆեր» ՍՊ ընկերության կողմից ենթակա չէ բավարարման:»:

Պատվիրատուն 17.02.2021թ.-ին ներկայացված թիվ ՍՉԱՄ-142 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր «Տրանս-Սֆեր» ՍՊ ընկերության կողմից 03.02.2021թ.-ին ներկայացված գրության՝ հայտնում եմ, որ գրությամբ ներկայացված դատողությունները պարզապես անհիմն ու երևակայական են: Հետևաբար անիմաստ եմ գտնում կրկին անգամ անդրադառնալ մտացածին պնդումներին և խնդրում եմ հիմք ընդունել մեր ընկերության կողմից 2021 թվականի փետրվարի 03-ին ներկայացված գրությունը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով 17.12.2020թ.-ին հայտարարվել է «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 25.12.2020թ.-ին:

iii. Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան:

iv. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով անվտանգության և պահնորդային ծառայությունների համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«1. Պահնորդական ծառայությունն անհրաժեշտ միջոցների ներգրավմամբ՝ մարդկային անձնակազմի կողմից իրականացվող գործունեություն է որը պետք է ունակ լինի՝

- *անընդհատ պարեկության միջոցով ողջամտորեն կանխարգելելու, կանխելու, կասեցնելու և խափանելու պահպանվող տարածքում իրավախախտումները,*
- *ողջամտորեն ապահովելու պահպանվող տարածքում գտնվող անձանց պատշաճ վարքագիծը:*

2. Պահնորդական ծառայությունը մատուցվում է պահնորդների միջոցով, ովքեր պետք է՝

- *իրականացնեն պատշաճ պահնորդական ծառայություն /ներառյալ տեսահսկման և հակահրդեհային ահազանգման համակարգերի միջոցով/,*
- *իրականացնեն հասարակական կարգի պահպանում,*
- *կանխեն խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը,*
- *արագ և համարժեք արձագանքեն արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն),*
- *կազմեն պահնորդական զեկուցագրեր՝ ներառելով միջադեպերի, իրավախախտումների, պատահարների դեպքերը և այլ վերաբերելի փաստեր,*
- *անվտանգության խախտման կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքում անմիջապես ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ և այդ մասին անհապաղ տեղեկացնեն պահպանվող օբյեկտի ղեկավարին,*

- *արգելեն կողմնակի անձանց մուտքը,*
- *փակ բակ թույլատրեն մուտք գործելու միայն աշխատակիցների ավտոմեքենաներին,*
- *ամենօրյա շրջայց կատարեն շենքի ներսում՝ աշխատանքի ավարտից հետո,*
- *կատարեն պահպանվող տարածքի անվտանգության ապահովման հետ կապված՝ պահպանվող օբյեկտի ղեկավարի հանձնարարությունները,*
- *արտակարգ իրավիճակի դեպքում օժանդակեն պահպանվող օբյեկտի ղեկավարին՝ վտանգը չեզոքացնելու կամ դրա հետևանքները վերացնելու կամ նվազեցնելու հարցում,*
- *իրականացնեն պահպանվող տարածքի դռների, անցակետի, մուտքը վերահսկման, սարքավորումների, բանալիների ապահով հսկողություն՝ դրանք հանձնելով միայն լիազորված անձանց:*

3. Պահպանության կառուցվածքը՝

Պահնորդական ծառայությունն իրականացվելու է շուրջօրյա՝ առանց հանգստյան և տոնական օրերի, ընդ որում՝

- *մեկ պահակակետ-շաբաթական յոթ օր, քսանչորսժամյա պահնորդական ծառայություն՝ առնվազն մեկ պահնորդի միջոցով,*
- *մեկ պահակակետ- միայն աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00, առնվազն մեկ պահնորդի միջոցով:*

Պահնորդները պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում:

Պահպանման ենթակա տարածք է հանդիսանում «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տասներկու հարկանի վարչական շենքը՝ 5780,7 մ2 մակերեսով, նկուղը՝ 719,4 ք.մ և հարակից տարածքը (շվաքարանը) 281,4 մ2 մակերեսով, որը գտնվում է ք. Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում:

Վերոնշյալ բոլոր պայմանները պարտադիր են և պետք է իրականացվեն պահնորդական ծառայությունը մատուցողի կողմից:

Պահնորդական ծառայություն մատուցողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կկրի այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով կհասցվի Պատվիրատուին:

Պահնորդական ծառայություններ մատուցելիս պահնորդները պետք է կրեն եղանակային պայմաններին համապատասխան ամառային և ձմեռային միասնական համազգեստ:

Պահնորդները պարտավոր են իրենց պարտավորությունների կատարման ընթացքում կատարել Պատվիրատուի կողմից տրված «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքին չհակասող համապատասխան հանձնարարությունները:

Կատարողը պարտավոր է՝

• պահնորդների անհատական կազմը համաձայնեցնել Պատվիրատուի հետ,

• պահնորդին այլ պահնորդով մշտապես կամ ժամանակավորապես փոխարինելիս ոչ ուշ քան 24 ժամ առաջ համաձայնեցնել Պատվիրատուի հետ,

• պատվիրատուի պահպանության ենթակա տարածքում պահնորդի համար սահմանել մեկամսյա ժամկետով փորձաշրջան, որպեսզի Պատվիրատուն պարզի կոնկրետ Պահնորդը համապատասխանո՞ւմ է իր աշխատանքային կարողություններին և մասնագիտական որակներին թե ոչ և չհամապատասխանելու պարագայում Պատվիրատուի պահանջով փոխարինել այլ Պահնորդով:

• պայմանագրի կատարման ընթացքում պահնորդի կողմից պահնորդական ծառայությունների ոչ պատշաճ կատարման կամ չկատարման դեպքում Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով 1 աշխատանքային օրվա ընթացքում փոխարինել ծառայություն իրականացնող պահնորդին այլ պահնորդով:

• ծառայություն մատուցող ընտրված մասնակիցը պետք է ունենա պահնորդական գործունեության լիցենզիա

• մինչև հայտերի բացման օրը մասնակից կազմակերպությունները կարող են ծանոթանալ պահպանման ենթակա տարածքին (ք. Երևան, Կոմիտաս 49/4)»:

v. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել «Աբսոլյուտ Սեքյուրիթի» ՍՊ, «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊ, «Քինգ Մարշալ» ՍՊ, «Պահապան 1» ՍՊ ընկերությունները:

vi. Մասնակիցներն առաջարկել են հետևյալ գները.

Չափաբ. համարը	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	ՄԱՀ	Ընդհանուր գինը
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	«Պահապան-1» ՍՊԸ	6600000	1320000	7920000
2	«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ	8250000	1650000	9900000
3	«Պահապան Գրուպ» ՍՊԸ	6000000		6000000
4	«Աբսոլյուտ Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ	8640000		8640000
5	«Էլ-Էն Գարդ Սիստեմս» ՍՊԸ	6840000		6840000
6	«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ	6840000		6840000

7	«ՍՕԿՕԼ» ՍՊԸ	6240000		6240000
8	«ՅՈՒՆԻՊՐՈՏԵԿՏ» ՍՊԸ	7800000		7800000
9	«Քինգ Մարշալ» ՍՊԸ	7680000	1536000	9216000

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.12.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշել է հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել և մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների՝ 14.12.2020թ.-ին, ժամը 16:00-ին:

viii. Հանձնաժողովի 20.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ բանակցություններին մասնակիցներն առաջարկել են հետևյալ գները.

Չափաբ. համարը	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	ՄԱՀ	Ընդհանուր գինը
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	«Պահապան-1» ՍՊԸ	3350000	670000	4020000
2	«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ	8250000	1650000	9900000
3	«Պահապան Գրուպ» ՍՊԸ	5400000		5400000
4	«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ	6840000		6840000
5	«ՍՕԿՕԼ» ՍՊԸ	5800000		5800000
6	«ՅՈՒՆԻՊՐՈՏԵԿՏ» ՍՊԸ	5390000		5390000
7	«Քինգ Մարշալ» ՍՊԸ	3360000	672000	4032000

ix. Նույն արձանագրության համաձայն՝ «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված /հաղթող. մասնակից է ճանաչվել «Պահապան-1» ՍՊԸ-ն՝ առաջարկելով պայմանագիրը կատարել 4 020 000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

x. 21.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

xi. Հայտարարությամբ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 25.01.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով 17.12.2020թ.-ին հայտարարված «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային

առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, համաձայն որոնց՝ գնային առաջարկը պետք է բաղկացած լինի արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ՝ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով 17.12.2020թ.-ին հայտարարված «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան, որին մասնակցելու նպատակով, հայտ ներկայացրած «Պահապան-1» ՍՊԸ-ն 21.01.2021թ.-ին ժամը 14:00-ին տեղի ունեցած միաժամանակյա բանակցություններին արդյունքում ճանաչվել է «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված և հաղթող մասնակից՝ առաջարկելով պայմանագիրը կատարել 4 020 000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով, որպես առաջարկվող ծառայության ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար առաջարկելով 3 350 000 ՀՀ դրամ գումար:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և

դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Բողոքաբերը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Սույն գործով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ «Պահապան-1» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված ծառայության արժեքը՝ 3 350 000 ՀՀ դրամ գումարը պակաս է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերի ինքնարժեքից: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Բողոքաբերն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ հաղթող մասնակից ճանաչված ընկերության կողմից վճարման ենթակա աշխատավարձի միակողմանի կատարված հաշվարկներին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այդ հանգամանքը բավարար չէ արձանագրելու, որ «Պահապան-1» ՍՊԸ-ի կողմից որպես առաջարկվող ծառայության ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար ներկայացված 3 350 000 ՀՀ դրամ գումար գնային առաջարկը ցածր է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

Այդ հանգամանքը դիտարկելու և քննարկման առարկա դարձնելու համար անհրաժեշտ պայման է դրա ուսումնասիրության բազմակողմանիությունն ու լրիվությունը, որը կարելի կլիներ իրականացնել միայն հաղթող ճանաչված մասնակցի կողմից

ներկայացված ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարի բաղադրիչների հաշվարկի գնահատման արդյունքում, որոնք, սակայն, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի հիման վրա չեն պահանջվում և ներկայացվում:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն անհիմն են, որպիսի պայմաններում ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 25.01.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/04 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**